Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը ծնվել է 1963 թ. դեկտեմբերի 27-ին, Գյումրիում:

1981 թ. ավարտել է տեղի Գ. Սունդուկյանի (այժմ՝ Ջ. Բայրոնի) անվան թիվ 20 միջնակարգ դպրոցը և ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1982-84 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ջորացրվելուց հետո շարունակել է ուսումը և 1986 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել սարկավագ:

1987 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Ճեմարանը և ծառայության անցել Վեհարանում՝ որպես քարտուղար:

1988 թ. մարտին պաշտպանել է ավարտաճառ՝ «Պետրոս արքեպս. Բերդումյան. կյանքն ու գործը և «Մեկնութիւն Յոբայ» աշխատությունը» թեմայով՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

Նույն թվականի մայիսի 22-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա և վերանվանվել Տ. Միքայել՝ ի հիշատակ Ադանայի ջարդի (1909 թ.) ժամանակ նահա-

տակված Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանի: Ձեռնադրությունից հետո կատարել է Մայր Տաճարի ավագ լուսարարի պարտականությունները:

1988-89 ուստարում ծառայել է Հոգևոր Ճեմարանում որպես դասատիարակ՝ միաժամանակ դասավանդելով «Ս. Պատարագի մեկնություն» առարկան: 1988 թ. դեկտեմբերյան աղետաբեր երկրաշարժից հետո մասնակցել է աղետյալներին օժանդակություն բաշխելու Մայր Աթոռի աշխատանքներին:

1989 թ. նշանակվել է Եղեգնաձորի Ս. Խաչ վանքի վանահայր, ապա մեկնել վերաբացված Արցախի թեմ՝ ստանձնելով Գանձասարի վանքի վանահոր պարտականությունները:

1989 թ. նոյեմբերին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Կիլիկիայի մայրաքաղաք Սիսը 1890-1920 թթ.» թեմայով, և ստացել վարդապետական աստիճան:

1990-91 թթ. աշխատել է Մայր Աթոռի նորաստեղծ Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում:

1991-92 թթ. եղել է Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ՝ միաժամանակ դասավանդելով «Հայրաբանություն», «Ընդհանուր Եկեղեցու պատմություն» և «Հին Կտակարանի մեկնություն» առարկաները:

1992-94 թթ. ծառայել է որպես Մայր Տաճարի փոխլուսարարապետ՝ շարունակելով դասավանդությունները Հոգևոր Ճեմարանում:

1994 թ. մայիսին պաշտպանել է ծայրագույն վարդապետական թեզ՝ «Ս. Կղեմես եպս. Հռոմայեցի» թեմայով, և ստացել ծայրագույն վարդապետական աստիճան:

1994-95 թթ. եղել է նախ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, ապա երջանկահիշատակ Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի անձնական քարտուղարն ու գավազանակիրը: 1995-97 թթ. ուսանել է Հռոմի Պապական Արևելյան Ինստիտուտում: 1997 թ. հունիսին ներկայացնելով «Պողոս Տարոնացին և իր «Բացայայտութիւն կարգաց ժամուց աղօթից» աշխատությունը» վերնագրով թեզը՝ ստացել է Արևելյան եկեղեցական գիտությունների մագիստրոսի գիտական աստիճան:

1997-99 թթ. եղել է Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի օգնականը՝ միջեկեղեցական հարաբերությունների և հատուկ առաքելությունների գծով: Այս հանգամանքով մասնակցել է մի շարք քաղաքներում տեղի ունեցած համաժողովների ու կոնֆերանսների:

1987-1999 թթ. Հայր Միքայելը հրատարակել է մեծաթիվ բանասիրական-աստվածաբանական հոդվածներ «Էջմիածին» և «Գանձասար» հանդեսներում, հանդես է եկել դասախոսություններով Հայաստանում և արտերկրում:

1999 թ. մարտից մինչև 2000 թ. մայիսը համատեղության կարգով եղել է Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանի տնօրենը:

1999 թ. սեպտեմբերին ընտրվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Հավատք և կարգ» հանձնաժողովի անդամ:

1999 թ. դեկտեմբերի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ: 2000 թ. մայիսի 5-ին, Վեհափառ Հայրապետի մեկ այլ տնօրինությամբ, համատեղության կարգով, նշանակվել է Հնդկաստանում Հայրապետական լիազոր ներկայացուցիչ:

2001 թ. սեպտեմբերի 30-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս և հաստատվել որպես Շիրակի թեմի առաջնորդ: